

Հ Ո Ք Ե Հ Ա Ն ¹)

(Լեզենդա)

Փոցխովի ձորում^{**}) ծաղկում էր Շամօն
Կուսական գարուն ու սէր շքնչելով,
Փոցխովի ձորում թօշնում էր Համօն
Ծաղիկ աղջրկայ սիրուց տանջուելով:

—Ձէ, չեմ հաւատում իսկի քո սէրին,
Դու սուտ ես ասում, դու չես սիրում ինձ...
Ասում էր Շամօն սիրահար տղին
Ու հեռու-հեռու հըրում իրանից:

Ու դարձեալ գընաց տղան սիրակէզ.
—Ո՞ր կըրակն ընկնեմ, Շամօ, որ գըլթաս.
Սիրտս չեմ կարող թէ հանեմ տեսնես—
Ինչ անեմ ուրիշ, որ ինձ հաւատաս:

—Տեսնում ես, ահա, ասաւ աղջիկը,
Ցոյց տալով լերան գագաթը ահեզ.
Ինձ դէր քո ուսին, սրինգըդ փըչեր,
Ու վէր, պարելով՝ տար մինչև այնտեղ:

*) Մի բարձրութիւն է Ախալցխայի և Ուրաւելի մէջ տեղը՝ Վրացիք
ասում են „Սուլթմեղիա“—հոգին դուրս եկաւ. իսկ թուրքերը՝ „Օղան
Փաթրալան“—տղայ ճաքեցնող:

**) Ախալցխայի ձորն է:

Երբ որ կը հասնենք էն սարի գլխին,
Այնժամ կ'իմանամ, որ սիրում ես ինձ,
Այնտեղ կը լինեմ ես քո սիրուհին,
Ու սիրով կապուած կ'իջնենք այնտեղից:

Ու գլրաւ ուսին սիրած աղջկան,
Սըինգը հընչեց, ըսկըսեց պարը,
Ճանապարհ ընկաւ սիրահար տղան
Դէպի ամպամած լեռան կատարը:

Գընում է, գնում սեպ ժայռերն ի վեր,
Ու պար է գալի, և անվերջ ածում.
— Դեռ շատ է հեռու... ճրտեղ ես դու դեռ...
Դու ինձ չես սիրում, դու սուտ ես ասում...:

Ծալում են յոգնած ծընկները տակին,
Քըրտինքը վազում ճակատից ներքե,
Բերանն է հասել— թըռչում է հոգին,
Աչքերը մթնում, շընչում հեիհե:

— Ձէ, չեմ հաւատում ես դեռ քո սէրին,
Դեռ շատ է հեռու գագաթը լեռան...
Ասում է Շամօն նըստած ուսերին,
Ճըգնում է նորից ուժասպառ տղան:

Արդէն ամպերի տակին է պարում,
Մօտիկ է արդէն գագաթը ձիւնօտ,
Վերջին ուժերը հաւարում, լարում,
Դարձեալ մի պըտոյտ, դարձեալ մի ոլորտ...:

Մի քիչ էլ... քիչ էլ... վերջապէս հասաւ,
Վայր դըրաւ ուսից սարի կատարին.
— «Հոգիս հանեցիր, օՖ, Շամօ...» ասաւ,
Ասաւ ու ընկաւ սըրինգը ձեռին:

—Այժմ քո սէրին հաւատում եմ ես,
 Այս ժամից ահա քոնն եմ յաւիտեան,
 Ճշրաց աղջիկը, գըրկեց վերջապէս,
 Գըրկեց Համօի... դիակն անկենդան:

Այժմ էլ ժէռուտ սարի գադաթին
 Դեռ ցոյց են տալի մի հին գերեզման,
 Պատմում, ախտոտում անբաղդ իգիթին
 Ու սարի՛ անունն ասում «Հոգեհան»...

ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ